ՏԵՂԵԿԱՆՔ

2022թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառքներով օտարված հողամասերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ մարզպետարանների ներկայացված տեղեկատվության՝ 2022թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճուրդ վաճառքներով օտարվել է **1729 հա** հողեր՝ **4,672,169,453.52** հազ. դրամով:

Օտարումները համեմատաբար ակտիվ են եղել ՀՀ Արմավիրի **/462.80 հա/,** ՀՀ Արագածոտնի **/459.74 հա/,** ՀՀ Կոտայքի **/282.52 հա/,** ՀՀ Գեղարքունիքի /**170.66 հա**/ և ՀՀ Վայոց ձորի **/131.13 հա/** մարզերում, առավել պասիվ՝ ՀՀ Շիրակի **/19.57 հա/, ՀՀ Արարատի /33.88 հա/,** ՀՀ Սյունիքի /**35.02 հա/,** ՀՀ Լոռու **/56.57 հա/** և ՀՀ Տավուշի **/77.18 հա/** մարզերում:

	ՀՀ մարզ	Աճուրդների քանակը	Տարածքը /հա/	Գումարը /հազ. դրամ/
1.	**Արագածոտն**	283	459.74	273,079,196
2.	**Արարատ**	57	33.88	70,187,895
3.	**Արմավիր**	202	462.80	416,863,893.8
4.	**Գեղարքունիք**	193	170.66	177,849,058.0
5.	**Լոռի**	154	56.57	171,856,409.3
6.	**Կոտայք**	462	282.52	2,341,649,563.0
7.	**Շիրակ**	115	19.57	188,648,534
8.	**Սյունիք**	109	35.02	115,205,791.00
9.	**Վայոց ձոր**	176	131.13	105,267,226.0
10.	**Տավուշ**	218	77.18	811,561,888
	Ընդամենը	**1969**	**1,729.1**	**4,672,169,453.52**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Ըստ իրականացված աճուրդների քանակի՝ ընդամենը ՀՀ - ում կազմում է **1969** միավոր (**1729.1 հա**), որից **821** միավոր (**1622,92** հա) գյուղատնտեսական նշանակության, **1,018** միավոր (**71,98 հա**) բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության **86** միավոր (**19,31 հա**), հատուկ պահպանվող **39** միավոր (**13,07** հա) և **5** միավոր (**1,63 հա**) էներգետիկայի հողերի աճուրդ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	Տարբերությունը
1.	**Արագածոտն**	273,079,196	262,489,050	10,590,146
2.	**Արարատ**	70,187,895	63,688,906	6,498,989

3.	**Արմավիր**	416,863,893.8	196,885,192.9	219,978,701
4.	**Գեղարքունիք**	177,849,058.0	145,279,909.00	32,569,149
5.	**Լոռի**	171,856,409.3	151,805,026.8	20,051,383
6.	**Կոտայք**	2,341,649,563.0	1,488,292,980.0	853,356,583
7.	**Շիրակ**	188,648,534	160,220,953	28,427,581
8.	**Սյունիք**	115,205,791.00	88,303,330.00	26,902,461
9.	**Վայոց ձոր**	105,267,226.0	48,562,290.02	56,704,936
10.	**Տավուշ**	811,561,888	744,640,805	66,921,082
	Ընդամենը	**4,672,169,453.52**	**3,350,168,443**	**1,322,001,082**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ օտարված հողամասերի դիմաց գանձված գումարների հարաբերությունը դրանց կադաստրային արժեքի համեմատ ՀՀ մարզերում տարբեր են՝ այսպես օրինակ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ՀՀ Կոտայքի մարզում՝ **853,356,583** հազ. դրամի օգուտ, ՀՀ Արմավիրի մարզում՝ **219,978,701** հազ. դրամի օգուտ և ՀՀ Տավուշի մարզում՝ **66,921,082** հազ. դրամի օգուտ, իսկ ամենացածր ցուցանիշը ՀՀ Արարտի մարզում է **6,498,989** հազ. դրամ: 2022թ. ոչ մի մարզում հողամասերի օտարման արդյունքում կորուստ չի արձանագրվել:

N	**ՀՀ մարզ**	**Օտարված հողի մակերեսը (հա) 2021/2022**		**Տարբերությունը**	**Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ) 2021/2022**		**Տարբերությունը**
1.	**Արագածոտն**	311	459.74	148.74	276,833,233	273,079,196	-3,754,037
2.	**Արարատ**	377	33.88	-343.12	691,415,294	70,187,895	-621,227,399
3.	**Արմավիր**	492	462.80	-29.2	402,767,924	416,863,893.8	14,095,969.8
4.	**Գեղարքունիք**	129	170.66	41.66	150,166,040	177,849,058.0	27,683,018
5.	**Լոռի**	106	56.57	-49.43	351.348.806	171,856,409.3	-179,492,396.7
6.	**Կոտայք**	263	282.52	19.52	2,378,638,523	2,341,649,563.0	-36,988,960
7.	**Շիրակ**	60	19.57	-40.43	202,424,203	188,648,534	-13,775,669
8.	**Սյունիք**	61	35.02	-25.98	83,017,867	115,205,791.00	32,187,924
9.	**Վայոց Ձոր**	108	131.13	23.13	101,282,876	105,267,226.0	3,984,350
10.	**Տավուշ**	49	77.18	28.18	96,539,485	811,561,888	715,022,403
	Ընդամենը	**1955**	**1,728**	**-227**	**4,734,434,255**	**4,672,169,453.52**	**-62,264,801.48**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ 2021 թվականի համեմատ /**1955** հա/ 2022 թվականին /**172,1** հա/ օտարվել է **227 հա** պակաս հողատարածքներ, և արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել **62,264,801,48** ՀՀ դրամ պակաս:

Ներկայումս հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Առաջարկում ենք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել նաև համայնքների, ինչպես

նաև մարզպետարանների էլեկտրոնային կայքերում և հետամուտ լինել դրանց պատշաճ կատարմանը: